



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**  
**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

2019թ. նոյեմբերի 5

N 142

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԼՈՒՍԱԳՅՈՒԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԷԴՎԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 226-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2019 թվականի հուլիսի 8-ի N 01/05/429-2019 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Լուսազյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Է. Բաղդասարյանի 2019 թվականի հոկտեմբերի 30-ի բացատրությունը՝ **կարգադրում եմ**.

Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Լուսազյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Էդվարդ Բաղդասարյանին հայտարարել նկատողություն:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713



Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ